ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԺԱՄԿՈՉՅԱՆ ՆԵԼԼԻ ԳԵՎՈՐԳԻ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ– ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1166-1226 ԹԹ.

Թ.00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հովհաննիսյան Արամ Էդուարդի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Եղիազարյան Արման Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու, ասիստենտ
Ստեփանյան Արարատ Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հունիսի 17-ին՝ ժամը 12:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Կրոնագիտության 068 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0025, ք. Երևան, Աբովյան փողոց 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենք):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. մայիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արշակ Յուրիի Բալյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես մեծ առաքելություն է ստանձնել հայի ինքնության պահպանման բոլոր գործընթացներում: Նրա դերակատարումը ավելի է մեծացել այն ժամանակ, երբ Հայաստանը կորցրել է իր պետականությունը և ընկել օտար պետությունների տիրապետության տակ՝ հատկապես իր մեծ դերակատարումն ունենալով հայկական մշակույթի զարգացման և պահպանման մեջ:

Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու փոխհարաբերությունները 1166-1226 թթ.հետազոտող սույն թեման ընդգրկում է բավականին բարդ և հակասական մի ժամանակաշրջան, երբ թե՛ Բյուզանդական կայսրությունը և թե՛ Հռոմի պապական աթոռը փորձում էին համոզել Հայոց եկեղեցուն հեռանալու իր դավանանքից և միավորվելու քաղկեդոնական կամ կաթոլիկ եկեղեցիների հետ: Այդ պարտադրանքը հատկապես ուժեղացավ այն ժամանակ, երբ հաստատվեց էր Կիլիկիայի հայոց թագավորության ճանաչման գործընթացը, և վերը նշված ուժերը առիթից օգտվելով՝ փորձում էին պարտադրել Հայոց եկեղեցուն միավորվել և ընդունել իրենց դավանանքը:

Կիլիկյան Հայաստանի և Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հայոց պատմության ամենակարևոր, միևնույն ժամանակ քիչ ուսումնասիրված ժամանակաշրջաններից է: Այն ընդգրկում է բավական բարդ, միևնույն ժամանակ հակասական մի ժամանակաշրջան, երբ տարածաշրջանով հետաքրքրված էին ոչ միայն հարևան երկրները, այլև Քրիստոնյա Արևմուտքը: Կիլիկյան Հայաստանը և Հռոմկլայի կաթողիկոսարանը, գտնվելով չափազանց շահեկան աշխարհագրական դիրքում, 12-13-րդ դարերում մեծ կարևորություն էին ներկայացնում թե՛ տարածաշրջանի մի շարք պետությունների, թե՛ Հռոմի Պապական աթոռի և թե՛ Արևելք արշավող խաչակրաց արշավանքների առաջնորդների համար: Այլ խոսքով ասած՝ բավական մեծանում էր հայոց պետության և Հռոմկալի կաթողիկոսարանի արժեքը:

Թեմայի արդիականությունը և կարևորությունը: Քննարկվող ժամանակաշրջանը հայոց պատմության առանձնահատուկ կարևոր, արժեքավոր և առավել քիչ լուսաբանված էջերից է, հատկապես պետություն–եկեղեցի հարաբերությունների համատեքստում: Նշված հարցերին և տվյալ ժամանակաշրջանի իրադարձություններին այլ դիտակետերից անդրադառնալն ունի առանձնահատուկ **կարևորություն և արդիական է** ոչ միայն այն հիմունքով, որ գիտական ճանաչողության տեսակետից այն դեռևս ամբողջովին ուսումնասիրված չէ, այլև հետաքրքրական է պետություն–եկեղեցի հարաբերությունների պատմության կարևորագույն և վճռական դրվագների լուսաբանման և հարաբերությունների կարգավորման ծիրից: Առանձնակի և համակողմանի ներկայացված չեն որոշ դրվագներ՝ պայմանավորված առկա կցկտուր տեղեկություններով: Բացի այդ՝ ատենախոսության թեման **կարևորվում է** նրանով, որ տվյալ ժամանակաշրջանում թե՛ Բյուզանդական կայսրությունը և թե՛ Հռոմի Պապական աթոռը փորձում էին համոզել Հայոց եկեղեցու ղեկավարությանը՝ դավանաբանական զիջումներ իրականացնելու և միավորվելու իրենց եկեղեցիներին, և այս հարցում չափազանց կարևորվում էր Կիլիկիայի հայկական պետության և Հայոց եկեղեցու համագործակցությունն ու միասնական ճակատի ստեղծումը: Հարկ է նշել, որ եկեղեցաքաղաքական այդ բարդ հարաբերությունների մի շարք մանրամասներ ցայսմ էլ բավարար կերպով

ուսումնասիրված չեն, և սույն ատենախոսության նպատակն է նաև լրացնելու այդ բացը: Ատենախոսության թեման **կարևորվում է** նաև նրանով, որ քննարկվող պատմաշրջանում բուն Հայաստանում չկար այլևս պետականություն, իսկ հայության մեծամեծ զանգվածները, գաղթելով պապենական հողերից, բնակություն էին հաստատել Կիլիկիայում և նրա հարակից տարածքներում: Տեղի բնակչությունը մեծ հույսեր էր կապում Ռուբինյանների ստեղծած հայկական իշխանապետության և Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի հետ, հատկապես, որ Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանն այս պատմաշրջանում ուներ համահայկական մեծ դեր և նշանակություն, քանզի նրա իշխանությունը տարածվում էր ոչ միայն բուն Հայաստանի և Կիլիկիայի սահմանների, այլև հայաբնակ բոլոր շրջանների վրա:

Վերոնշյալ հարցերի, ինչպես նաև պատմաեկեղեցական իրադարձությունների ամբողջական բնութագիրը, համապարփակ վերլուծությունն ու տեսակետների առաջքաշումը դարձել են **ատենախոսության առանցքը**: Քննարկվող հիմնահարցերը մեծապես **կարևորվել են** նաև այն տեսակետից, որ ներեկեղեցական, ներպետական և միջեկեղեցական իրադարձություններն ուղղակիորեն առնչվում են հայության ինքնության, ինքնագիտակցության պատմագործառական դրսևորման ու զարգացման հիմնախնդիրներին:

Այսպիսով՝ հրապարակային պաշտպանության ներկայացվող սույն ատենախոսությունը **նպատակ ունի** վեր հանելու մի կարևոր և սակավ ուսումնասիրված ժամանակաշրջանում Հայոց պետության և եկեղեցու հարաբերությունների կարևորագույն դրվագները՝ **նորովի և համակողմանի լուսաբանմամբ, ինչպես նաև նախկինում ձևավորված մոտեցումների վերարժևորմամբ կամ այլ տեսակետների առաջադրմամբ**:

Հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները: Ուսումնասիրման առարկան Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու՝ 1166-1226 թթ. հարաբերությունների պատմության հանգամանալից հետազոտությունն է՝ առանձնահատուկ դրվագների վերհանմամբ և նորովի լուսաբանմամբ: Հետազոտությունն իրականացնելիս **խնդիր ենք դրել** միջնադարյան պատմիչների և ձեռագրերի համադրությամբ, գիտական գրականության ուսումնասիրման հիման վրա ներկայացնել Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու փոխհարաբերությունները քննարկվող ժամանակաշրջանում: Հետագայում էլ Հայոց եկեղեցու վրա ճնշումներ էր գործադրում Կաթոլիկ եկեղեցին, և Հայոց եկեղեցին Կիլիկիայի հայկական պետության հետ համատեղ պայքարում էր նրանց դեմ.

Այդ նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**.

Ա. պատմակրոնագիտական ու եկեղեցագիտական փաստերի և ժամանակակից գիտական գրականության օժանդակությամբ ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության և Հայոց եկեղեցու՝ 1166-1226 թթ. փոխհարաբերությունների պատմության մանրամասները,

Բ. ներկայացնել Հայոց եկեղեցու իրադրությունը 12-րդ դարի երկրորդ կեսերին և կաթողիկոսական աթոռի համար ծավալվող պայքարում պետական համակարգի միջամտության հանգամանքները,

Գ. լուսաբանել Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի հարաբերությունները Բյուզանդիայի քաղկեդոնական քաղաքականության դեմ՝ 1166-1198 թվականներին և

հայոց պետության՝ Հայ առաքելական եկեղեցուն և հայ հոգևորականներին աջակցության կարևորագույն դրվագները,

Դ. վեր հանել Կիլիկիայի հայոց պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունների մանրամասները Հռոմի կաթոլիկ եկեղեցու և պապական աթոռի դեմ պայքարում՝ 1166-1226 թվականներին,

Ե. բացահայտել Հայոց եկեղեցու դերակատարումը պետական-քաղաքական կառավարման համակարգում,

Զ. ցույց տալ Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայկական պետությանը բաժին հասած մարտահրավերները՝ 12-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1226 թվականը և նրանց համատեղ պայքարը,

Է. ցույց տալ հայ բարձրաստիճան հոգևորականության վարած դիվանագիտական գործունեությունը և դրանց արդյունքները պետականության ստեղծման և երկրի զարգացման գործում,

Ժ. ներկայացնել Հայոց եկեղեցու և առանձին հոգևորականների դերակատարումը Կիլիկիայի հայոց պետության քաղաքական-կառավարման ոլորտում,

Ի. կարևորել և ներկայացնել Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայոց պետության խաղացած վիթխարի դերը հայկական մշակույթի տարբեր բնագավառների և հատկապես Արծաթե դարի ստեղծման գործում:

Ատենախոսության գիտական նորույթը: Թեկնածուական ատենախոսության հետազոտությունն ունի ինչպես պատմակրոնագիտական, այնպես էլ գիտաքաղաքական մեծ արժեք ու նշանակություն:

1. Առաջին անգամ քննվել է Կիլիկիայի հայկական պետության և Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունների պատմության մի մեծ ժամանակաշրջան՝ 1166-1226 թվականների ժամանակահատվածը՝ իր բոլոր դրսևորումներով:
2. Ատենախոսության մեջ վեր են հանվել մի շարք ձեռագրեր, որոնց մի մասն անտիպ է և պատմագիտական գրականության մեջ հրապարակվում է առաջին անգամ:
3. Կիլիկիայի հայկական պետության և Հայոց եկեղեցու հարաբերությունների պատմության պարբերացման փորձ է կատարվել:
4. Ճշտվել են ժամանակագրական մի շարք վիճելի հարցեր, տարբեր եկեղեցաժողովներում կայացրած կարևոր որոշումները:
5. Կարևոր ճշգրտումներ են կատարվել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի գահակալման, Գրիգոր Ե Քարավեժի մահվան հանգամանքների, Լևոն արքայի և կաթողիկոս Հովհաննես Սսեցու հարաբերությունների բարդացման, ինչպես նաև մի շարք այլ կարևոր իրադարձությունների մանրամասները:
6. Ի հայտ են բերվել Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման գործում հայ հոգևորականության խաղացած վիթխարի դերի մանրամասները:
7. Հանգամանալից հետազոտվել են հայ-քաղկեդոնական եկեղեցաքաղաքական հարաբերությունների մանրամասները և վեր հանվել մի շարք չպարզաբանված և կնճռոտ խնդիրներ:
8. Երևան են հանվել հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունները, դրանց մանրամասները և Հռոմի կաթոլիկ եկեղեցու ունեցած դերը Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման և Լևոն Մեծագործի թագադրման գործում:

9. Առաջին անգամ լուսաբանվել են Կոստանդնուպոլսում Կիլիկիայի պատվիրակության և մասնավորապես Ներսես Լամբրոնացու հարց ու պատասխանի հանգամանքները բյուզանդական կայսեր հետ՝ Լևոնին թագավոր ճանաչելու գործում, ինչպես նաև մի շարք այլ տեղեկություններ:

10. Առանձնահատուկ շեշտադրմամբ ներկայացվել է մանրամասներ Հայոց կաթողիկոսի և հայ բարձրաստիճան հոգևորականության խաղացած կարևոր դերակատարումը՝ Կիլիկիայում Հեթումյանների հարստության հիմնադրման գործում:

11. Լուսաբանվել է Հռոմկլայի կաթողիկոսարանի և ընդհանրապես Կիլիկյան Հայաստանի հոգևորականության դերակատարումը հայոց պետության պետական-քաղաքական կառավարման ոլորտում:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ իրականացված աշխատանքը կարևոր ձեռքբերում է հայագիտության համար, հատկապես, եթե հաշվի առնենք այն գործոնը, որ մինչև այժմ պատմագիտության մեջ Կիլիկիայի պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմության վերաբերյալ եղել են միայն հպանցիկ անդրադարձեր: Ուսումնասիրվող առարկան և առաջ քաշած նոր տեսակետներն ամբողջությամբ գիտական նորույթ են:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական շրջանակներն սկիզբ են առնում 1166 թվականից, երբ կաթողիկոս ընտրվեց միջնադարի նշանավոր հոգևորական և գիտնական Ներսես Շնորհալին, ում գլխավորությամբ Հայոց եկեղեցին պայքարում էր Բյուզանդական կայսրության եկեղեցական քաղաքականության դեմ և հասնում մինչև 1226 թվականը, երբ Կիլիկյան Հայաստանում երկարատև պայքարից հետո իշխանության եկան Հեթումյան տոհմի ներկայացուցիչները: Ժամանակագրական սահմանների նման բաժանումը կապված է այն հանգամանքով, որ մինչ 1226 թվականը հայոց պետությունը կարողացավ հիմնականում կանխել օտար պետությունների կողմից իրականացվող բոլոր կրոնական պարտադրանքների քաղաքականությունը: Այս շրջանից սկսած մինչև 1307 թվականը թե՛ քաղկեդոնականների և թե Հռոմի կաթոլիկ եկեղեցու կողմից ճնշումները բավական թուլացան:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Ատենախոսության մեջ օգտագործված աղբյուրներից չափազանց շահեկան է Կիլիկյան Հայաստանի ճանաչված պետական, քաղաքական և դիվանագիտական գործիչ Սմբատ Սպարապետի երկերի գործածումը: Ընդ որում, օգտվել ենք նրա երկու աշխատություններից՝ և՛ «Տարեգրքից»[1], և՛ «Պատմությունից»[2]: Սմբատ Գունդստաբլի աշխատությունները և նրա հաղորդած տեղեկություններն անգնահատելի արժեք են եղել թեկնածուական ատենախոսության ուսումնասիրման համար, քանզի նա, լինելով դեպքերի ժամանակակից ականատեսը, կարողացել է տեղեկացնել պետական-քաղաքական կառավարման համակարգի, մի շարք մանրամասների, ինչպես նաև պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների այնպիսի դեպքերի և իրադարձությունների մասին, ինչը բացակայում է միջնադարի այլ պատմիչների երկերում:

---

[1] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956:

[2] Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս եւ Հայոց Մեծաց, Մոսկուա, 1856:

Սույն ուսումնասիրության համար կարևոր են եղել 13-18-րդ դարերի մանր ժամանակագրությունները[3], Ե-ԺԲ դարի[4], ԺԳ դարի հիշատակարանները[5], ինչպես նաև Մաշտոցի անվան մատենադարանում և տարբեր երկրների արխիվներում պահպանված տարբեր ձեռագրերի հետազոտությունները: Նշյալ գրչագրերը մի կողմից անտիպ են և առաջին անգամ են հրատարակվում պատմագիտական գրականության մեջ, իսկ մյուս կողմից էլ նոր լույս են սփռել եկեղեցաքաղաքական տարբեր դեպքերի և իրադարձությունների վրա: Եվ վերջապես հայկական սկզբնաղբյուրներից շահեկան են եղել նաև պատմիչներ Կիրակոս Գանձակեցու[6], Սամուել Անեցու երկը շարունակողներից մեկի[7], Հեթում Կոռիկոսցու[8], Վահրամ Ռաբունու[9], Վարդան Արևելցու[10], Ղևոնդ Ալիշանի[11] աշխատությունները, որոնք քաղաքական և եկեղեցական տարբեր իրադարձությունների մասին հաճախ տալիս են անգնահատելի տեղեկություններ, և դրանց շնորհիվ է, որ պարզում ենք տարբեր կարևոր իրադարձությունների մանրամասներ:

Պետք է նշել, որ թեմայի հետազոտության համար օգտվել ենք նաև օտար հեղինակների աշխատություններից, մասնավորապես՝ Բար Հեբրաուսից[12], Անանուն Եդեսացուց[13], Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունից[14], արաբական աղբյուրներից[15] և մի շարք այլ աշխատանքներից: Հատկապես օգտակար է եղել Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունը: Հայտնի փաստ է, որ նշյալ պատմիչը, լինելով չեզոք տեղեկություններ հաղորդող պատմիչ, շատ ստուգապատում հեղինակ է, և նրա հաղորդած տեղեկությունները միշտ էլ աչքի են ընկել ճշգրտությամբ: Ուստի, ատենախոսության մեջ ևս բավականին օգտվել ենք այս

---

[3] Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ. Հակոբյանը, հտ. Ա, Երևան, 1951, հտ. Բ, Երևան, 1956:

[4] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, աշխատ.՝ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988:

[5] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյանը, Երևան, 1984:

[6] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

[7] Սամուէլի քահանայի Անեցիոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Յառաջաբանութիւն, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, նաև՝ Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, Ադամից մինչեւ 1776 թ., աշխատ.՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014:

[8] Կ. Մաթևոսյան, Հեթում Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 2011:

[9] Վահրամ Ռաբունի, Պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859:

[10] Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862:

[11] Ղևոնդ Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901:

[12] Bar Habraeus, The Chronography, London, 1932.

[13] Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Լ. Տեր-Պետրոսյանի, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հտ. 12, Ասորական աղբյուրներ, գիրք բ, Երևան, 1982:

[14] Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1871:

[15] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա իբն Շադդադ, կազմեց՝ Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն (Ալ- Քամիլ Ֆի-Լ-Տարիխ), «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թիվ 11, Արաբական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

պատմիչի մեծարժեք երկից: Մասնավորապես հեղինակը բավական կարևոր տեղեկություններ է հաղորդում 12-րդ դարի 70-ական թվականներին Հռոմկլայում Հայոց կաթողիկոսի ընտրության համար մղվող պայքարի, Մլեհ իշխանապետի մասնակցության և նշյալ շրջանում պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների մասին: Բացի վերը նշված սկզբնաղբյուրներից՝ օգտվել ենք նաև միջնադարյան ժամանակաշրջանի այլ հեղինակներից:

Ինչպես արդեն նշվել է, ատենախոսությունը գործածել է մեծածավալ ուսումնասիրություններ, որոնց մեծ մասը հայալեզու է և բավական օգտակար է եղել հետազոտության համար:

Այսպես՝ Կիլիկյան Հայաստանի և Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների պատմության համար շատ կարևոր է Ղևոնդ Ալիշանի հեղինակած Սիսուան[16] կոթողային աշխատությունը, որտեղ հեղինակը կարողացել է բավական հետաքրքիր տեսակետներ հաղորդել մեզ հետաքրքրող դեպքերի մասին: Անցնում են տասնամյակները, սակայն Ալիշանի ստեղծագործությունները չեն կորցնում իրենց արժեքը: Մյուս հեղինակը, որից շատ օգտվել ենք, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն է, հեղինակ, ում գրչին է պատկանում մի այնպիսի մեծարժեք ստեղծագործություն, որ անգերազանցելի է Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրման համար[17]: Աշխատության մեջ հեղինակը ներկայացնում է տարբեր պատմիչների տեղեկությունները և բավական հետաքրքիր տեսակետներ արտահայտում 1166-1226 թթ. պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների մասին: Բացի Ազգապատումից՝ բավական հետաքրքրություն է ներկայացնում նաև հեղինակի երկրորդ աշխատանքը[18], որը նույնպես ունի պատմագիտական մեծ արժեք:

Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտությունը նոր ընթացք ստացավ 20-րդ դարի կեսերին, որտեղ իր գործունեությամբ աչքի ընկավ նախևառաջ Գ. Միքայելյանը[19] , ով հիմնվելով ժամանակի հիմնական սկզբնաղբյուրների վրա՝ ստեղծել է բավական հետաքրքիր մի աշխատություն, որի արժեքը պահպանվել է ցայսօր: Թեև աշխատանքի հիմնական հատվածը նվիրված է Կիլիկիայի պետության քաղաքական և տնտեսական անցուդարձերի պատմությանը, այնուամենայնիվ վերջինս մի շարք հետաքրքիր տեսակետներ է արտահայտում նաև որոշ եկեղեցաքաղաքական դեպքերի առնչությամբ: Հարկ ենք համարում նաև նշել, որ, թեև ատենախոսության մեջ հիմնականում օգտվել ենք հայալեզու գրականությունից, այնուամենայնիվ հետազոտության համար բավական օգտակար են եղել նաև որոշ եվրոպացի հետազոտողների ուսումնասիրությունները, մասնավորապես՝ Վ. Լանգլոայի[20], Ֆ.

---

[16] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885:

[17] Մ. Օրմանյան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001:

[18] Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին եւ իւր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911:

[19] Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952. Ատենախոսության մեջ գործածվել է այս աշխատանքի հայերեն թարգմանությունը, տե՛ս Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007:

[20] V. Langlois, Constitution sociale et politique de l Armenie sous les rois de la dynastie Roupenienne, Saint-Petersbourg, 1860.

Տուրնեբիզի[21], Ժ. Ռիշարի[22], Ս. Ռենսիմանի[23], Պետեր Հալֆտերի[24], Ռ. Գրուսեի[25], Բ. Համիլթոնի[26] և այլ հայտնի աշխատությունները: Հետագայում էլ իրենց մեծարժեք աշխատանքներով աչքի ընկան հայտնի պատմաբաններ Ն. Ակինյանը[27], Ա. Բոզոյանը[28] և Վ. Տեր-Ղևոնդյանը[29], որոնք խորքային աշխատանքներ իրականացրին Կիլիկյան Հայաստանի պատմության մի շարք վիճահարույց հարցերի մասին: Մասնավորապես Ա. Բոզոյանը Կիլիկիայի քաղաքական և եկեղեցական անցուդարձերի պատմության մասին գրել է բավական գիտական աշխատանքներ և մենագրություններ և հետաքրքիր տեսակետներ է հայտնել Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների, ինչպես նաև հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների մասին:

Մեզ հետաքրքրող շրջանի մասին ուսումնասիրությունները շարունակվեցին նաև 21-րդ դարում: Այդ ընթացում աչքի ընկած հեղինակներից կարելի է առանձնացնել Կ. Մութաֆյանին[30], Լ. Տեր-Պետրոսյանին[31] և Ա. Հովհաննիսյանին[32]: Մեր հետազոտության համար հատկապես շահեկան են եղել Լ. Տեր-Պետրոսյանի և Ա. Հովհաննիսյանի հեղինակային գործերը, որոնք հետազոտելով բազմաթիվ միջնադարյան սկզբնաղբյուրներ, ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր և ժամանակակից գիտական գրականություն՝ կարողացել են բավական հետաքրքիր տեսակետներ հաղորդել 12-13-րդ դարերի Կիլիկիայի պետության և եկեղեցու փոխհարաբերությունների մասին: Բացի վերը նշված հեղինակներից՝

---

[21] F. Tournebize, Histoire politique rt religieuse de l ' Armenie, Paris, 1900.

[22] J. Richard, La papaute' et les missions d Orient, Ecole francaise de Rome, 1977.

[23] S. Runciman, A History of the Crusades, vol. III, London, 1954.

[24] P. Halfter, Das papstum und die Armenier im Frühen und Hohen Mitclater. Von den crsten kontakten bis zur fixi erung der kirchenunkion im jahre 1198, Wien, 1996.

[25] R. Grousset, L Empire du Levant, Paris, 1949.

[26] B. Hamilton, The Latin Church in the Crusader States, The Secular Church, London and New York, 2016.

[27] Հ.Ն. վ.Ակինեան, Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոս Տարսոնի կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1956:

[28] Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը 12-րդ դարի 30-70-ական թվականներին, Երևան, 1988, նույնի՝ Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Երևան, 1995, նույնի՝ Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների փաստաթղթերում, վավերագիտության խնդիրներ, Երևան, 2023, Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի եկեղեցաքաղաքական փոխհարաբերությունների փաստաթղթերում, վավերագիտության խնդիրներ, Ա. Բոզոյան, Գ. Դանիելյան, Մ. Ա. Շևալիե, Երևան, 2023:

[29] Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1993, նույնի՝ Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171-1260), Երևան, 2017:

[30] Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, C. Mutafian, Recherches sur l' Armenie Cilicienne, Paris, 2002.

[31] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ Ա, Երևան, 2005, հտ. Բ, Երևան, 2007:

[32] Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թվականներին, Երևան, 2008, նույնի՝ Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2018, նույնի՝ Մլեհ Ռուբինյան. Իշխանապետ Կիլիկիո հայոց, Երևան, 2022:

ատենախոսության մեջ գործածել ենք նաև բազմաթիվ հայ և օտարալեզու հեղինակների, որոնց աշխատություններին անդրադարձ է կատարվում ատենախոսության տարբեր գլուխներում:

Ատենախոսության համար օգտակար է եղել նաև գիտական հոդվածների օգտագործումը, որոնց մի մասն ունի բացառիկ արժեք ատենախոսության շարադրման համար: Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել 20-րդ դարի ականավոր պատմաբան, բյուզանդագետ Հ. Բարթիկյանի աշխատանքները, մի անձնավորություն, ով իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց հայագիտության զարգացմանը, հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը և իր արժանի տեղն է գտնում հայագիտության մեջ: Սույն ատենախոսության համար հատկապես օգտակար են եղել հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների պատմության վերաբերյալ նրա արժեքավոր հոդվածները[33] և առաջ քաշած տեսակետները: Մյուս կարևոր հեղինակը, ում հոդվածներից օգտվել ենք, Ա. Հովհաննիսյանն է, ով երկար տարիներ զբաղվելով Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտությամբ՝ ոչ միայն հեղինակ է տարբեր մենագրությունների, այլև մեծ քանակությամբ գիտական հոդվածների, որոնց մի մասը վերաբերում է Կիլիկյան Հայաստանի և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների պատմությանը[34]: Դրանցում վեր են հանվել մի շարք վիճահարույց խնդիրների պարզաբանումներ: Եվ հենց դա է պատճառը, որ մենք ևս օգտվել ենք այդ աշխատանքներից: Բացի վերը նշված աշխատանքներից՝ օգտվել ենք նաև Վ. Թորոսյանի[35], Արտավազդ արքեպիսկոպոսի[36],

---

[33] Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հտ. Ա, Երևան, 2002, նույնի՝ Փիլիպուպոլսի հայկական վանքի վանահայր Հովհաննես Ատմանի դերը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի կաթողիկոսի օրոք (1166-1173), «Հայ-բյուզանդական հետազոտություններ», Երևան, 2002, նույնի՝ Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», Երևան, 2002, նույնի՝ Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, «Աշտանակ», Երևան, 1995:

[34] Ա. Հովհաննիսյան, Պետության և եկեղեցու հարաբերությունները Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, 2009, Դ, 181-191 էջեր, նույնի՝ Մեծ իշխան Մլեհի եկեղեցական քաղաքականութեան շուրջ, «Բազմավէպ» հանդէս, 2013, թիւ 3-4, 201-210 էջեր, նույնի՝ Լևոն Մեծագործի և Լամբրոնի Հեթումյանների հարաբերությունների պատմությունից, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, Թ., Երևան, 2014, 229-236 էջեր, նույնի՝ Մի դրվագ Մլեհ իշխանապետի և Ռուբեն Բ-ի հարաբերությունների պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 2021, թ. 1 (33), 18-24 էջեր, նույնի՝ Լևոն Մեծագործի և Գրիգոր Քարավեժի հարաբերությունների պատմությունից (12-րդ դարի 90-ական թվականներ), «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան, 2019, 2 (3), 153-168 էջեր:

[35] Վ. Թորոսյան, Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ, «Էջմիածին», 2016, ՀԳ, ԺԲ, 84-112 էջեր, Վ. Տեր-Ղևոնդյան, Վ. Թորոսյան, Հայ-լատին եկեղեցական հարաբերությունների քաղաքական ենթահողը (13-րդ դարի 30-40-ական թվականներ), «Բանբեր Մատենադարանի», 2021, թիվ, 31, էջ 5-20, Վ. Թորոսյան, Սսի ԺԳ դարասկզբի եկեղեցական ժողովը Հայ-լատին հարաբերությունների համատեքստում, «Տարեգիրք», Գեղարվեստի ակադեմիայի, թիվ 11, Երևան, 2021/2, էջ 125-140:

Հ. Արշամյանի[37], Վ. Ավետիսյանի[38], Վ. Վարդանյանի[39], Վ. Պերպերյանի[40], Ս. Մխիթարյանի[41], Ա. Բոզոյանի[42], Կ. Մութաֆյանի[43], Պետեր Հալֆտերի[44] և այլ հեղինակների հոդվածներից:

Ատենախոսության փորձաքննությունը: Թեկնածուական ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի նիստում: Թեկնածուական ատենախոսության գլխավոր դրույթներն ու եզրակացությունները լուսաբանված են ատենախոսի՝ ԲԿԳԿ-ի (Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե) կողմից երաշխավորված ամսագրերում հրատարակված վեց հոդվածներում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ատենախոսության հետազոտման և շարադրման համար կիրառվել են պատմական, քննական, համադրական-

---

[36] Արտավազդ արքեպիսկոպոս, Հայ-լատին հարաբերությունները հույն-լատին հարաբերութեանց լույսով, «Էջմիածին» 1945, թիվ 1-2, էջ 16-23, Արտավազդ արքեպիսկոպոս, Հայ-լատին հարաբերությունները հույն-լատին հարաբերութեանց լույսով, «Էջմիածին» 1945, թիվ 3-4, էջ 19-24:

[37] Հ. Արշամյան, Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները XII–րդ դարի վերջերին և XIII–րդ դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1994, թիվ 3, էջ 50-65, Հ. Արշամյան, Կիլիկիայում վերակերտված հայոց թագավորության համազգային իրավասությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, էջ 46-55:

[38] Վ. Ավետիսյան, Լատինական եկեղեցու դիրքորոշումը 1194-1219 թթ. Կիլիկիա-անտիոքյան հակամարտության հարցում, «Էջմիածին», 2012, Ը, էջ 96-101, Վ. Ավետիսյան, Հույն (բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2022, թիվ 33, էջ 366-378:

[39] Վ. Վարդանյան, Գրիգոր Դ Տղա հայրապետը ժամանակի դավանական և քաղաքական խաչուղիներում, «Էջմիածին», 2005, թիվ Է-Ը, 85-93 էջեր:

[40] Հ. Պէրպէրեան, Անանիա հակաթոռ կաթողիկոս (1201-1211) (1223)), «Սիոն», 1964, հոկտեմբեր, ԼԸ, h.10, 286-289 էջեր:

[41] Ս. Մխիթարյան, Հայ-ասորական միջեկեղեցական հարաբերություններն ըստ Գր. Մագիստրոսի, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, թ. 3, էջ 229-234:

[42] Ա. Բոզոյան, Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում (առաջին շփումներից մինչև 1198 թվականի եկեղեցական միության հաստատումը), «Էջմիածին», 1996, ԺԲ, էջ 115-128, նույնի՝ Կիլիկյան Հայաստանի քաղաքական զարթոնքի ազդակները (12-13-րդ դարեր), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. 20, Երևան, 2001, էջ 156-167, նույնի՝ Անտիոքի դերը Լևոն Մեծագործի քաղաքականության մեջ, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2022, թիվ 34, էջ 5-21:

[43] C. Mutafian, The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisyan and S. Payaslian, California, 2008, p. 93-110.

[44] Peter Halfter, La Couronne D' Armenie: Un Document Recemment decouvert illustrant les relations entre L' emperreur Frederic II et le Roi Hetoum I, Le Mediterrancee des Armeniens XIIe-XV e siecles, Sous la direction de Claude Mutafian, Paris, 2014, p. 101-120, Peter Halfter, Papacy, Catholicosate, and kingdom of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisyan and S. Payaslian, California, 2008, p. 93-110.

զուգադրական, ինչպես նաև Եկեղեցու պատմության համակարգված վերլուծության մեթոդները՝ անաչառ հետազոտություն կատարելու սկզբունքով: Նորագույն պատմահամեմատական եղանակները սույն ուսումնասիրության հիմնական մեթոդներից են: Աշխատանքում քննվել և արժևորվել են յուրաքանչյուր հարցի վերաբերյալ եղած փաստական նյութը, սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները, վերանայվել և վերարժևորվել են քննարկվող հիմնահարցերի հակասական և իրարամերժ հայեցակարգերն ու մոտեցումները, և քննական-համեմատական վերլուծությունների արդյունքում առաջարկվել են նոր լուծումներ:

Ատենախոսության գործնական և կիրառական նշանակությունը: Աշխատանքն ունի ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ կիրառական և գործնական նշանակություն: Հետազոտության մեջ ներկայացվող փաստերը, առաջ քաշած տեսակետներն ու մեկնաբանություններն օգտակար կարող են լինել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերի, Հայկական սփյուռքի, ՀՀ ԳԱԱ ակադեմիայի պատմության ինստիտուտի և ընդհանրապես հայոց պատմության միջնադարյան ժամանակաշրջանի պատմությամբ հետաքրքրվող անձանց համար: Բացի այդ, ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության տարբեր համալսարաններում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում առանձին դասընթացներ և հատկապես Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության դասավանդման համար:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 155 էջ:

«Ներածություն» բաժնում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, վեր են հանված ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը, ներկայացված է կատարված աշխատանքի կիրառական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության վերլուծությունը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է՝ **«Հռոմկլայի կաթողիկոսարանը և Կիլիկիայի հայոց պետությունը 1166-1187 թթ.»** և բաղկացած է յոթ ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Ներսես Շնորհալու հայրապետությունը և պետություն-եկեղեցի հարաբերությունները 1166-1173 թթ.», ներկայացվում են հայոց նոր հայրապետ Ներսես Շնորհալու աթոռակալման մանրամասները, հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունները եկեղեցիների միավորման շուրջ, բյուզանդական կայսեր և Պոլսի պատրիարքի գործադրած մեծ ջանքերը և Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը: Նույն ենթագլխում ամփոփված են նաև Ներսես Շնորհալու համագործակցության հանգամանքները Կիլիկիայի պետության ղեկավարների՝ Թորոս Բ իշխանապետի և Մլեհ Ռուբինյանի հետ, Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի թեմերի համագործակցության, Հայոց կաթողիկոսարանի և բուն Հայաստանի թեմերի համագործակցության, ինչպես նաև Հայոց կաթողիկոսի միջնորդական առաքելության մանրամասները՝ Կիլիկիայում

Ռուբինյանների և Հեթումյանների միջև պատերազմների գործողությունների դադարեցման և մի շարք այլ գործերում:

«Ռուբեն Բ-ի սպանության առեղծվածը» վերնագրով **երկրորդ ենթագլուխը** ներկայացնում է Կիլիկյան Հայաստանում 12-րդ դարի 60-ական թվականների վերջի և 70-ական թվականների սկզբի ներքաղաքական անցուդարձերը, որի արդյունքում Թորոս Բ իշխանապետի որդի Ռուբենը և նրա խնամակալը ստիպված լքեցին Կիլիկյան Հայաստանի սահմանները և իշխանությունը հանձնեցին Մլեհ Ռուբինյանին: Նրանք նախ մեկնեցին Անտիոք, իսկ որոշ ժամանակ անց Ռուբենը՝ Հռոմկլա բերդաքաղաք: Ներկայացված են նաև Ռուբեն Բ-ի՝ Հռոմկլայում սպանության հանգամանքները, և վեր են հանված ժամանակակից հեղինակների տեսակետները վերը նշյալ խնդրի շուրջ: Ցույց են տրված բոլոր այն շահագրգիռ կողմերը, որոնց ձեռնտու էր տվյալ պահին Ռուբեն Բ-ի սպանությունը:

Երրորդ ենթագլխում՝ «Կիլիկիայի հայկական պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունները 1169-1173 թվականներին», լուսաբանված են Մլեհ իշխանապետի՝ Կիլիկիայում իշխանության գալու մանրամասները, արտաքին քաղաքականության փոփոխությունները, մահմեդական պետությունների հետ համագործակցության, որոշ հոգևորականների հանդեպ դաժանությունների կիրառումը և այլն: Որոշակի անդրադարձ է կատարված նաև 12-րդ դարի 70-ական թվականների առաջին կեսերին պետություն-եկեղեցի հարաբերությունների մանրամասներին, և ցույց է տրված, որ Մլեհ իշխանապետի կառավարման ժամանակաշրջանում թե՛ Բյուզանդական կայսրությունը և թե՛ խաչակիրները դադարեցին միջամտելու Կիլիկիայի հայոց պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի և՛ ներքին գործերին, և՛ կրոնական գործերին, ինչը բնականաբար շատ կարևոր էր: Նույն ենթագլխում ներկայացված են նաև հայոց իշխանապետի կողմից նոր մայրաքաղաք Սսի հիմնելու մանրամասները և կարևորությունը:

«Հայ-ասորական եկեղեցաքաղաքական հարաբերությունները 1166-1173 թվականներին» վերտառությամբ **չորրորդ ենթագլխում** անդրադարձ է կատարվում վերոնշյալ եկեղեցիների մերձեցմանը, նրանց համատեղ գործունեությանը և հատկապես երկու եկեղեցիների պայքարին Բյուզանդական կայսրության եկեղեցական քաղաքականության դեմ, ինչպես նաև դավանաբանական որոշ փոփոխությունների խնդիրներին: Ներկայացված են ասորիների պատրիարք Միքայել Մեծի (1166-1199), Ներսես Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի հարաբերությունների պատմության որոշ մանրամասներ: Քննարկվում են նաև Ասորական եկեղեցու մի շարք ներկայացուցիչների և Կիլիկյան Հայաստանի ղեկավարության՝ Ռուբինյանների հետ հարաբերությունների պատմության որոշ մանրամասներ:

Հինգերորդ ենթագլուխը՝ «1173 թվականին Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունը և Կիլիկիայի հայոց պետության միջամտությունը», քննարկման նյութ է դարձրել Ներսես Շնորհալու մահվանից հետո Հռոմկլայում տեղի ունեցած պայքարը կաթողիկոսական աթոռի համար: Սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա ներկայացված են տվյալ ժամանակաշրջանում Հռոմկլայի բերդաքաղաքում տեղի ունեցող կարևոր գործընթացները և հատկապես կաթողիկոսական ընտրությունները: Ցույց է տրված, որ Ներսես Շնորհալու մահվան պահին Գրիգոր Տղան հայրապետանոցում չէր և հայրապետական հանձնարարականով գտնվում էր Կիլիկյան Հայաստանում՝ հաշտեցնելու համար Կիլիկիայի երկու հակամարտող ընտանիքներին՝

Ռուբինյաններին և Հեթումյաններին: Լուսաբանված է նաև, որ այլ ելք չունենալով՝ Ներսես Շնորհալին մահվան մահճում կաթողիկոսական մատանին հանձնել է իր մյուս եղբոր որդուն՝ Գրիգոր Ապիրատին, ով նույնպես Պահլավունիներից էր և եպիսկոպոս էր:

«**Կաթողիկոսական գահի համար պայքարը Գրիգոր Ապիրատի և Գրիգոր Տղայի միջև**» խորագիրը կրող **վեցերորդ ենթագլուխը** անդրադարձ է կատարում Պահլավունյաց նշանավոր գերդաստանի երկու ականավոր ներկայացուցիչների պայքարին: Լուսաբանվում է Կիլիկիայի ղեկավարության միջամտությունը Հայոց կաթողիկոսական աթոռի համար մղվող պայքարին: Միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկություններից ապացուցվում է, որ Գրիգոր Տղան, անելանելի կացության մեջ գտնվելով, դիմել է իր փեսային՝ հայոց իշխանապետին: Վերջինս Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի աջակցությամբ արշավել է Հռոմկլա, գրավել այն և Հայոց հայրապետական աթոռին բազմեցրել Գրիգոր Տղային: Ապացուցված է նաև, որ նույն Մլեհ Ռուբինյանի և Գրիգոր Դ Տղայի նախաձեռնությամբ Գրիգոր Ապիրատն էլ նշանակվել է Կիլիկիայի թեմերից մեկի առաջնորդ, որպեսզի նա նույնպես մասնակից դառնա հոգևոր ոլորտի կառավարմանը և ապագայում ևս բազմի Հայոց հայրապետի աթոռին:

Յոթերորդ ենթագլուխը՝ «Ռուբեն Գ-ն և պետություն–եկեղեցի հարաբերությունները 1175-1187 թվականներին», լուսաբանել և արժևորել է նշյալ ժամանակաշրջանի մի շարք կարևոր եկեղեցաքաղաքական անցուդարձեր: Առաջնահերթ ներկայացված են Բյուզանդական կայսրության նոր նկրտումները եկեղեցիների միավորման շուրջ և Հայոց եկեղեցու ու Կիլիկիայի պետության դիրքորոշումը, Միրիեկեֆալոնի հայտնի ճակատամարտը, 1178 թվականի Հռոմկլայի եկեղեցական ժողովը և նրանում ընդունած որոշումը: Ցույց են տրված նաև տվյալ շրջանում սկսված հայ կաթոլիկ եկեղեցիների շփումները, հանդիպումները և բանակցությունների որոշ մանրամասներ: Նշյալ ենթագլխի վերջում էլ անդրադարձ ենք կատարել Եգիպտոսի սուլթանությունում հայկական եկեղեցիները ղպտիներին հանձնելու փորձին և ի մի ենք բերել այն կարևոր քայլերը, որ կատարվել են Կիլիկիայի հայոց պետության և հայ բարձրագույն հոգևորականության կողմից, որպեսզի Եգիպտոսում գտնվող հայկական եկեղեցիները մնան հայ համայնքին:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրված է «**Պետության և Եկեղեցու փոխհարաբերությունները Լևոն Բ-ի օրոք (1187-1198 թվականներ)**» և բաղկացած է հինգ ենթագլխից:

«**Լևոն Բ-ի եկեղեցական քաղաքականությունը Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի կառավարման վերջին շրջանում (1187-1193)**» խորագրով **առաջին ենթագլխում** ներկայացված են մի շարք կարևոր խնդիրներ: Մասնավորապես լուսաբանված են Հռոմկլայի կաթողիկոսարանի և Քրիստոնյա Արևմուտքի մի շարք միապետերի հետ տարվող բանակցությունների կարևոր մանրամասները և այն բոլոր գործառույթները, որ Կիլիկիայի հայոց պետությունը վերցրել էր իր վրա՝ խաչակիրներին օգնելու համար: Միևնույն ժամանակ ցույց է տրված Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայկական իշխանապետության զգուշավոր քաղաքականությունը Եգիպտոսի Այյուբյան սուլթանության նկատմամբ: Ցույց են տրված այդ կարևոր բանակցություններում մասնակցած հայ ճանաչված հոգևորականների՝ Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Ապիրատի, Գրիգոր Դ Տղայի և ուրիշների դերակատարման հանգամանքները:

Երկրորդ ենթագլխում՝ «Գրիգոր Ե Քարավեժը՝ Հայոց կաթողիկոս և պետություն-եկեղեցի հարաբերությունների սրումը» վերտառությամբ, լուսաբանված են Գրիգոր Ե Քարավեժի աթոռակալման ժամանակաշրջանում հայոց իշխանապետի և կաթողիկոսի հարաբերությունների սրման խնդիրները: Ցույց են տրված Լևոն Մեծագործի կողմից կաթողիկոսի ձերբակալման, մայրաքաղաք Սիս բերելու մանրամասները և համընդհանուր ժողով հրավիրելու մտադրությունը: Վեր են հանվել հիմնականում բոլոր այն հարցերը և պատճառները, որոնք առիթ դարձան Հայոց կաթողիկոսի բանտարկությանը և վաղաժամ սպանությանը: Հրապարակ են հանվել այն բոլոր տեսակետները, որոնցով ցույց է տրվում, թե ինչպիսի հանգամանքներում հնարավոր դարձավ իրականացնել Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժի սպանությունը և այն իրավիճակը, որ առաջացավ Կիլիկյան Հայաստանում և Հռոմկլայում վերջինիս սպանությունից հետո:

«Հայ հոգևորականության դերակատարումը Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման գործում» խորագրով **երրորդ ենթագլխում** անդրադարձ է կատարվում միջազգային բարենպաստ վիճակին, որը ստիպեց Կիլիկիայի հայությանը մտածելու թագավորության հռչակման և միջազգային ճանաչման մասին: Երևան են հանված հայ հոգևորականության ու մասնավորապես ժամանակի նշանավոր գործիչներ Ներսես Լամբրոնացու և Հովհաննես Սսեցու դերակատարումն ու գործունեությունը Կիլիկիայի թագավորության հռչակման գործում: Բավական մանրամասնորեն ներկայացված են հայկական պատվիրակության այցը Բյուզանդական կայսրության մայրաքաղաք և երկկողմ բանակցությունները, որոնք ավարտվեցին անարդյունք, ինչպես նաև հայկական պատվիրակության այցը Արևմտյան Եվրոպա՝ մասնավորապես Հռոմի պապական աթոռ, որը պսակվեց հաջողությամբ: Եվ վերջապես անդրադարձ ենք կատարել Կիլիկիայի Տարսոն քաղաքում կայացած եկեղեցական ժողովներին և այն դավանաբանական զիջումներին, որ համաձայնվեց կատարել հայ բարձրաստիճան հոգևորականության մի մասը, ինչի արդյունքում էլ միայն հնարավոր դարձավ հետագայում Լևոն Մեծագործի թագադրության հանդեսի կազմակերպումը:

Չորրորդ ենթագլխում՝ «Լևոն Մեծագործի թագադրության արարողությունը» վերնագրով, հրապարակ ենք հանել Հայոց արքայի թագադրության հանդեսի հետ կապված մասնակիցներին և արարողության մանրամասներին: Մասնավորապես ցույց ենք տվել, թե ինչպես Կիլիկիայի անվանի հոգևորականներից Ներսես Լամբրոնացին կազմակերպեց Լևոն Մեծագործի թագադրության արարողությունը, որը տեղի ունեցավ Տարսոն քաղաքում: Ներկայացրել ենք գրեթե բոլոր հյուրերի և հատկապես հոգևորականների ցանկը, որոնք մասնակցել են այդ արարողակարգին: Այնուհետև ցույց ենք տվել, թե ինչպես Հռոմի պապի նվիրակ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելսբախը Հայոց կաթողիկոս Գրիգոր Ապիրատի և Ներսես Լամբրոնացու հետ միասին իրականացրել է Լևոն Մեծագործի թագադրման արարողությունը, ինչը մեծ իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում:

«Եկեղեցական նորամուծությունների հարցը և Լևոն Մեծագործը» խորագրով **հինգերորդ ենթագլխում** անդրադարձ է կատարվում Կիլիկյան Հայաստանի երկու նշանավոր գործիչներ Լևոն Մեծագործի և արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու հարաբերությունների պատմությանը: Վեր են հանվում այն կարևոր գործերը, որ սկզբնական շրջանում կատարում էր Ներսես Լամբրոնացին և որից գոհ էր Հայոց

արքան: Ցույց ենք տվել նաև, թե ինչ հանգամանքներում բարդացան Լևոն Մեծագործի և իր խորհրդականի հարաբերությունները, ի մի ենք բերել Ներսեսի նամակը՝ ուղղված Հայոց արքային, ինչպես նաև գլխի եզրափակիչ հատվածում ներկայացրել ենք Ներսեսի՝ Սսի արքունիքից հեռացման մանրամասները, նրա ծանր կացությունը, որի արդյունքում ի վերջո մահացավ հայտնի հոգևորականը:

Ատենախոսության **երրորդ գլուխը** վերնագրված է՝ **«Պետության և Եկեղեցու հարաբերությունները Լևոն Մեծագործի թագավորության շրջանում (1198-1219 թթ.)»** և բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կիլիկիայի պետության և Եկեղեցու համագործակցությունը թագավորության սկզբնական շրջանում», ներկայացված է այն իրավիճակը, որ գոյություն ուներ թագավորության հռչակումից հետո: Ցույց է տրված այն փաստը, որ թեև հայերը խոստացել էին դավանաբանական զիջումներ իրականացնել, այնուամենայնիվ դրանք գործնականում չկատարվեցին: Ներկայացված է Կիլիկիայում գործող հոգևոր-ասպետական միաբանությունների և հատկապես տաճարականներին երկրից վռնդելու դրվագները, ինչպես նաև կաթոլիկների հարստությունները Կիլիկիայի հայոց թագավորության մի շարք քաղաքներում: Ներկայացված է նաև Հայոց եկեղեցու ակտիվ մասնակցությունը հայկական թագավորության պետական կառավարմանը, հոգևորականների կողմից տարբեր բնագավառների ղեկավարումը, մասնավորապես Սսի արքեպիսկոպոսական ատյանի ղեկավարումը, ջանցլերի ինստիտուտի ղեկավարումը և այլն: Ենթագլխի վերջում էլ ներկայացրել ենք Լևոն Մեծագործի գործադրած ջանքերը, նրա դիմումը Հռոմի պապին, որի արդյունքում Անտիոքի լատին պատրիարքությունը հետ կանգնեց հայոց կաթողիկոսարանին իշխելու մտադրությունից: Վեր ենք հանել նաև Հայոց կաթողիկոսի կողմից Լևոն Ա արքայի և Լամբրոնի Հեթումյանների հաշտեցման մանրամասները:

«Լևոն Բ-ի վարած քաղաքականությունը և Հռոմկլայի կաթողիկոսարանի դերը այլ եկեղեցիների հետ հարաբերություններում» երկրորդ ենթագլխում փորձել ենք բացահայտել Հռոմկլայի կաթողիկոսարանի, Կիլիկիայի թագավորության և քրիստոնեական շրջակա եկեղեցիների հետ հարաբերություններում: Ցույց ենք տվել Լևոն Մեծագործի օրոք Ասորական եկեղեցու հետ հարաբերությունների մանրամասները, ինչպես նաև Ասորական եկեղեցու կողմից եկեղեցաշինությունը Կիլիկյան Հայաստանի բազմաթիվ քաղաքներում: Վեր են հանվել Հայոց եկեղեցու և Հունական ուղղափառ եկեղեցու հետ հարաբերությունների մանրամասները և Կիլիկիայում նրանց գործունեության պատմությունը: Ենթագլխի վերջում էլ որոշակի անդրադարձ է կատարվել Կիլիկյան Հայաստանում կաթոլիկ եկեղեցու հետ համագործակցության մանրամասներին, հայոց պետության կողմից նրանց նկատմամբ որոշակի սահմանափակումներին և մի շարք այլ կարևոր մանրամասներին:

Երրորդ ենթագլխում՝ «1203 թվականի կաթողիկոսական ընտրությունը քաղաքական բախման կիզակետում» վերտառությամբ, ներկայացված են Պահլավունիների վերջին կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատի մահվանից հետո երկրում ստեղծված նոր իրավիճակը և կաթողիկոսական ընտրությունների մանրամասները: Լուսաբանված են 1203 թվականի կաթողիկոսական թեկնածուները և նրանց հնարավորությունները: Փորձել ենք ցույց տալ, որ կաթողիկոսական ընտրությունը ընթացել է բավական լարված և անզիջում պայքարում, և ապացուցել ենք, որ Հայոց

հայրապետը՝ Հովհաննես Սսեցին, բազմել է հայրապետական աթոռին բացառապես Կիլիկյան Հայաստանի ղեկավարության և մասնավորապես Լևոն Մեծագործի ջանքերով: Ենթագլխի վերջում էլ ներկայացրել ենք Անանիա եպիսկոպոսի նոր ձեռնարկած քայլերը, նրա հարաբերությունները Իկոնիայի սուլթանի հետ և վերջինիս օգնությամբ Սեբաստիայում հակաթոռ կաթողիկոս օծվելու մանրամասները:

«Պետության և Եկեղեցու հարաբերությունները Հովհաննես Սսեցու աթոռակալման տարիներին» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են Հովհաննես Սսեցու աթոռակալման սկզբնական շրջանը, պետություն-եկեղեցի համագործակցության մանրամասները և այն ջերմ հարաբերությունները, որ գոյություն ունեին Հայոց արքայի և կաթողիկոս Հովհաննես Սսեցու միջև: Ցույց ենք տվել նաև կաթողիկոսի ազգականների ձերբակալման մանրամասները և Հայոց կաթողիկոսի ու Լևոն Մեծագործի հարաբերությունների սրման մանրամասները: Ենթագլխի երկրորդ հատվածում ներկայացրել ենք Հովհաննես Սսեցու՝ Կիլիկիայի հոգևոր գործերից հեռացնելու մանրամասները, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանում Դավիթ Արքակաղնեցու աթոռակալումը: Կարևորվել են Դավիթ Արքակաղնեցու մահից հետո Կիլիկիայի իրադրության բնութագրումը, Հայոց արքայի և Հովհաննես Սսեցու հաշտեցման մանրամասները, ինչպես նաև Հայոց կաթողիկոսի պարտականությունների հանձնման հանգամանքները և թագաժառանգ Զաբելի խնամակալ նշանակվելու մանրամասները:

Ատենախոսության **չորրորդ գլուխը** վերնագրված է՝ **«Կիլիկիայի հայոց գահի համար պայքարը և Հայոց եկեղեցին (1219-1226 թվականներ)»**: Այն բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Իրավիճակը Կիլիկյան Հայաստանում Լևոն Մեծագործի մահից հետո և Հայոց եկեղեցին», ներկայացված են Կիլիկիայի հիմնադիր արքա Լևոն Մեծագործի մահից հետո երկրում ստեղծված եկեղեցաքաղաքական բարդ կացությունը և խնամակալների կառավարման մանրամասները: Փորձել ենք ցույց տալ Հայ առաքելական եկեղեցու և հայ հոգևորականության դերակատարումը խնամակալների կառավարման ժամանակաշրջանում և նրանց համագործակցությունը թագավորական իշխանության հետ: Անդրադարձ ենք կատարել 13-րդ դարի 20-ական թվականներին Կիլիկիայի հայկական թագավորությունում գործող մի շարք վանքերի գործունեությանը:

«Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում խնամակալների կառավարման ժամանակաշրջանում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են Կիլիկյան Հայաստանում խնամակալների կառավարումը և գիտական գրականության մեջ առկա տեսակետները: Ցույց են տրված Լևոն Մեծագործի դստեր՝ Զաբելի խնամակալներից Ադան պայլի մահվան պատճառները և Կոստանդին սպարապետի ու Հայ առաքելական եկեղեցու հետ համագործակցության մանրամասները: Ենթագլխի վերջում էլ անդրադարձ է կատարվել Հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցու մահվան և Կոստանդին սպարապետի՝ Կիլիկյան Հայաստանում լիակատար իշխանություն ստանձնելու մանրամասներին:

Երրորդ ենթագլուխը՝ «Կոստանդին պայլի դերակատարությունը կաթողիկոսական ընտրություններում» խորագրով, քննության է առնում նոր կաթողիկոսի ընտրության մանրամասները: Այստեղ շեշտադրված են Կոստանդին Բարձրբերդցու՝ որպես կաթողիկոս ընտրվելու հարցում թագավորական իշխանության

և հատկապես Հայոց սպարապետի աջակցության հանգամանքները: Լուսաբանված են նաև Կիլիկիայի վերնախավի և հոգևոր իշխանության կողմից Զաբելի՝ Անտիոքի տիրակալի որդու՝ Ֆիլիպի հետ ամուսնության կազմակերպման մանրամասները: Ներկայացված են Ֆիլիպ արքայի կողմից հակահայ քաղաքականության մանրամասները և Հայոց եկեղեցու շահերի ոտնահարման դրվագները: Ցույց է տրված, թե ինչպես Կիլիկիայի հայոց սպարապետը, համագործակցելով հայոց իշխանների և կաթողիկոսի հետ, վերջինիս հեռացրեց գահից:

«Հեթումյանների դինաստիայի հաստատումը Կիլիկյան Հայաստանում և Հայոց եկեղեցին» խորագրով չորրորդ ենթագլուխն ամփոփում է Ֆիլիպ արքայի գահազրկումից հետո Կիլիկյան Հայաստանում տիրող նոր եկեղեցաքաղաքական իրավիճակի մանրամասները, արտաքին մարտահրավերները, Իկոնիայի սելջուկյան սուլթանության և Անտիոքի դքսության հետ թշնամանքը: Ցույց են տրված Կիլիկիայի պետական համակարգի և Հայոց եկեղեցու համագործակցության մանրամասները և Զաբել թագուհու՝ նոր ամուսնության խնդիրը: Լուսաբանված են Հայոց կաթողիկոսի և ասորիների պատրիարք Իգնատիոս Բ-ի գործադրած ջանքերը Զաբել թագուհուն համոզելու և հետ վերադարձնելու, ինչպես նաև Հեթումի հետ ամուսնության մանրամասները: Ենթագլխի վերջում ներկայացված են Կոստանդին սպարապետի միջամտության, Զաբելին բռնի կերպով Կիլիկիա վերադարձնելու, Հեթումի և Զաբելի ամուսնության մանրամասները և ի վերջո՝ Հեթումյանների հարստության հաստատումը Կիլիկիայում:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները՝

1. Պատմական Հայաստանի սահմաններից դուրս և հատկապես Հռոմկլայի բերդաքաղաքում հաստատված Հայոց կաթողիկոսությունն ու հայ բարձրաստիճան հոգևորականությունը պետականության բացակայության պայմաններում ստանձնեցին մեծ գործառույթներ տարածաշրջանի ողջ հայության գոյութենական և կրթամշակութային ինքնության պահպանման համար: Պետք է նշել, որ Հայոց կաթողիկոսարանի գործառույթները չսահմանափակվեցին միայն հոգևոր ոլորտի գործունեությամբ, այլև հայկական մշակույթի զարգացման բնագավառում կարևոր գործառույթներով:

2. Հայկական մշակույթի Արծաթե դարի ստեղծումը Հռոմկլայի կաթողիկոսարանի անդադրում գործունեության արդյունք է: 1166-1173 թվականներին Հայոց եկեղեցին կառավարող միջնադարի խոշորագույն հոգևորական Ներսես Շնորհալու բուռն և ակտիվ գործունեության շնորհիվ զարգացան Կիլիկիայի հայոց պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի փոխհարաբերությունները:

3. Ներսես Շնորհալին գրեթե իր ողջ աթոռակալման տարիներին սերտորեն համագործակցում էր Կիլիկիայում իշխող Ռուբինյան ընտանիքի ներկայացուցիչների հետ, և շատ բնական է, որ Հռոմկլայի կաթողիկոսարանի վարած քաղաքականությունն ընդունվում էր նաև Ռուբինյանների իշխանական ընտանիքի կողմից, և հակաքաղկեդոնական դիրքորոշումն իրականացվում էր Կիլիկիայի հայկական պետության ու եկեղեցու սերտ համագործակցության արդյունքում:

4. Ներսես Շնորհալին բավական ջերմ և բարիդրացիական կապեր էր ստեղծել նաև բուն Հայաստանի հոգևոր կենտրոնների, թեմերի և մի շարք եպիսկոպոսների

հետ, ժամանակ առ ժամանակ նրանց հետ բանակցում էր դավանաբանական, եկեղեցաքաղաքական, ազգային, ինչպես նաև այլ կարևոր խնդիրների շուրջ:

5. Քննարկվող ժամանակաշրջանի բնութագրիչ և կարևոր իրադարձությունը Հայ եկեղեցու և հատկապես հայ բարձրագույն հոգևորականության ներգրավումն էր Կիլիկիայի պետական քաղաքական կառավարման գործընթացներում: Դրա վառ վկայությունն էր այն իրողությունը, որ հայ բարձրաստիճան հոգևորականությունն իր մեծագույն ավանդն ունեցավ Կիլիկիայի հայոց թագավորության հռչակման համար տարվող բանակցություններում և Լևոն Մեծագործի՝ թագավոր հռչակման գործում: Եվ այս հարցում անգնահատելի դերակատարում ունեցան ժամանակի հայտնի հոգևորականները, մասնավորապես եպիսկոպոսներ Գրիգոր Դ Տղան, Ներսես Լամբրոնացին, Հովհաննես Սսեցին և շատ ուրիշներ:

6. Կիլիկիայի պետության և եկեղեցու հարաբերություններում կարևոր էր նաև այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցուն և նրա որոշ ներկայացուցիչների հանձնվեցին նաև պետական կառավարման համակարգի մի շարք այլ գործառույթներ: Հոգևորականներին հանձնվեց դատական համակարգի մի մասի ղեկավարումը՝ Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը բավական ազդեցիկ պաշտոն էր: Բացի այդ՝ Կիլիկիայի հայկական թագավորությունում գործող ջանցլերի (կանցլեր) բարձր պաշտոնը, որը ղեկավարում էր հայկական թագավորության արտաքին գործերի գերատեսչությունը, նույնպես հանձնվեց հայ հոգևորականներին, որոնք այդ առաքելությունն իրականացրին մեծ պատվով և պատասխանատվությամբ:

7. Հայ բարձրաստիճան հոգևորականները ստանձնեցին Կիլիկյան Հայաստանում բազմաթիվ կարևոր դիվանագիտական առաքելություններ, որոնք վերջիններս իրականացրին մեծ հաջողությամբ:

8. Կիլիկիայի պետության և եկեղեցու հարաբերություններում շատ կարևոր էր նաև Հայոց եկեղեցու դերակատարումը միմյանց դեմ պատերազմող նախարարական տների հաշտեցման գործում, որից պետությունը շատ տուժում էր: Եվ հենց Պահլավունի հայրապետների և մի շարք այլ անվանի եպիսկոպոսների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ժամանակավորապես կանգնեցնելու եղբայրասպան պատերազմները, որոնք տեղի էին ունենում Ռուբինյանների և Հեթումյանների իշխանական ընտանիքների միջև, և եկեղեցական հայրերի անմիջական գործունեության արդյունքում է, որ հասան հարատև խաղաղության, ինչն անշուշտ նպաստեց պետական քաղաքական կառավարման զարգացմանը:

9. Կիլիկիայի պետության և եկեղեցու համագործակցությունը պարզորոշ կերպով նկատվեց նաև միջեկեղեցական հարաբերություններում՝ հայ-ասորական, հայ-բյուզանդական, իսկ հետագայում նաև հայ-կաթոլիկ եկեղեցաքաղաքական հարաբերություններում: Այդ գործընթացների ժամանակ Կիլիկիայի հայոց պետությունը և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հիմնականում գործեցին միասնաբար և համատեղ ջանքերի գնով հասան նրան, որ Հայոց եկեղեցին իրականում որևէ դավանաբանական զիջումներ չիրականացրեց օտար եկեղեցական կառույցներին, մասնավորապես Բյուզանդիայի քաղկեդոնական և Հռոմի կաթոլիկ եկեղեցուն ու պահպանեց իր դարավոր կրոնն ու դավանանքը:

10. Հայոց եկեղեցին և նրա ղեկավարությունը մեծ ավանդ ունեցան նաև Լևոն Մեծագործի մահվանից հետո Կիլիկիայի հայկական թագավորությունում տիրող ներքաղաքական ճգնաժամը հարթելու գործում: Նախ նրանք տվեցին իրենց

համաձայնությունը Զաբել թագուհու և Անտիոքի դքսի որդու՝ Ֆիլիպի ամուսնության հարցում, իսկ որոշ ժամանակ անց, համագործակցելով Կոստանդին սպարապետի և հայ մեծ իշխանների հետ, մասնակից դարձան վերջինիս գահազրկման և Հեթումի ու Զաբելի ամուսնության գործընթացին:

11. 1166-1226 թվականներին, չհաշված փոքրիկ միջադեպերին, հիմնականում Կիլիկիայի պետության և եկեղեցու հարաբերությունները եղել են բարեկամական, ինչն էլ իր դրական ազդեցությունն է թողել հայոց պետության զարգացման, եկեղեցի-պետություն հարաբերությունների վրա:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում՝

1. Մի դրվագ Լևոն Մեծագործի և Ներսես Լամբրոնացու հարաբերությունների պատմությունից, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու», 2021, թ. Զ, էջ 87-93:
2. 1173 թվականի Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության պատմությունից, «Պատմություն և քաղաքականություն», գիտական հանդես, 2022, թ. 5 (22) էջ 32-41:
3. Հայ հոգևորականության դերակատարումը Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման և Լևոն Մեծագործի՝ թագավոր օծման հարցում, «Գիտական Արցախ», 2023, թ. 1 (16), էջ 22-32:
4. Մի դրվագ Կիլիկիայի հայկական թագավորության և եկեղեցու հարաբերությունների պատմությունից (1198-1219 թվականներ), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2023, թ. 2, հտ. 20, էջ 31-47:
5. Կիլիկիայի հայոց պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունից (1219-1226 թվականներ), «Հայագիտական հանդես», Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2023, 4 (63), էջ 162-176:
6. An Episode from the History of the Armenian State and Church Relations in Cilicia (1175-1187), Fundamental Armenology, 2024, 2(20), p. 125-134.

ЖАМКОЧЯН НЕЛЛИ ГЕВОРГОВНА

ГОСУДАРСТВЕННО-ЦЕРКОВНЫЕ ОТНОШЕНИЯ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ 1166-1226 ГГ.

Резюме

Настоящее диссертационное исследование посвящено анализу исторической динамики взаимоотношений между Армянским государством Киликии и Армянской Апостольской Церковью в период 1166–1226 гг. **Цель работы** заключается в всестороннем рассмотрении данных взаимодействий с учетом их политического, социального и религиозного контекста на основе изучения средневековых источников и современной научной литературы, обеспечивая максимально точную реконструкцию исторических процессов.

Структурно диссертация включает **введение, четыре главы, подразделенные на отдельные параграфы, заключения, список использованных источников** и **библиографию**.

Во введении обосновывается **актуальность** исследования, формулируются его **предмет, цели и задачи**, устанавливаются хронологические границы, определяется научная новизна и методологическая основа работы. Кроме того, рассматривается прикладная значимость исследования, проводится анализ использованных первоисточников и научной литературы, а также излагается общая структура и содержание диссертации.

Первая глава диссертации **"Католикосат Ромклы и Армянское государство Киликии в период 1166–1187 гг."**, посвящена изучению института католикосата Ромклы и политико-церковных отношений в Киликийском армянском государстве в период 1166–1187 гг. Особое внимание уделяется обстоятельствам восшествия Нерсеса Шнорали на патриарший престол, анализу его правления и взаимодействию Армянской Апостольской Церкви с Византийской империей в религиозно-политическом контексте. Рассматриваются ключевые события, включая убийство князя Рубена II в Ромкле, а также роль князя Млеха в борьбе за Католикосат Всех Армян и его попытки повлиять на процесс избрания нового католикоса. В заключительной части главы анализируются отдельные аспекты армяно-ассирийских церковных отношений, политика князя Рубена III в отношении Армянской Церкви, деятельность церковного собора в Ромкле, а также положение армянских христианских общин в Египте.

Вторая глава исследования, **"Взаимоотношения государства и церкви в период правления Левона II (1187-1198)"**, посвящена анализу государственно-церковных отношений в период правления Левона II Великого. В центре внимания находятся взаимоотношения католикоса Григора IV Тга с Левоном II, а также политико-религиозные аспекты их взаимодействия. Рассматриваются обстоятельства тайных переговоров с представителями христианского Запада, процесс избрания Григора V Каравежи на католикосский престол и политический контекст его последующего убийства.

Особое внимание уделяется роли армянского духовенства в процессах государственного управления, а также его участию в провозглашении Киликийского

Армянского царства и коронации Левона Мецагорца. Анализируется дипломатическая деятельность армянского духовенства, направленная на установление контактов с представителями Византийской империи и Папского престола. В заключительной части главы рассматривается королевская встреча в городе Тарсе, участие в ней армянского духовенства, а также характер взаимоотношений между Левоном II Великим и Нерсесом Ламбронаци, завершившихся для последнего трагическими последствиями.

Третья глава диссертации, **"Взаимоотношения государства и церкви в период королевства Левона Мецагорца (1198-1219)",** посвящена анализу государственно-церковных отношений в Киликийском Армянском царстве в период 1198–1219 годов. Особое внимание уделяется сотрудничеству государства и Армянской Апостольской Церкви по ключевым вопросам, возникшим после провозглашения царства, а также их противостоянию Латинскому патриархату Антиохии. Рассматриваются взаимоотношения Армянской Апостольской Церкви и Киликийского государства с Католической и Халкидонскими церквями, а также их влияние на внутриполитические процессы. Анализируются обстоятельства смерти католикоса Григора VI Апирата, завершение династии католикосов из рода Пахлавуни, выборы нового католикоса и провозглашение Ованеса Сисеци, а также связанные с этим раскольнические действия епископа Анании.

В заключительной части главы исследуется конфликт между Левоном II Великим и католикосом Ованесом Сисеци, их разрыв, временное управление католикосатом Давидом Аркакахнеци и последующее примирение Левона и Ованеса Сисеци.

Четвертая глава диссертации, **"Борьба за армянский престол Киликии и Армянская церковь (1219-1226)",** посвящена исследованию государственно-церковных отношений в Киликийском армянском царстве в период 1219–1226 годов. Рассматривается внутриполитическая ситуация, сложившаяся после смерти Левона II Мецагорца, а также взаимодействие Армянской Апостольской Церкви с государственными институтами в этот период.

Особое внимание уделяется процессу выборов нового католикоса, в частности избранию Константина Бардзрбердци, а также деталям его интронизации. Анализируется участие армянского католикоса и высшего духовенства в политическом управлении государством, включая их роль в организации брака царицы Забел, низложении царя Филиппа и утверждении династии Хетумянов.

В разделе "**Выводы**" обобщены основные результаты и заключения диссертации.

Общий объем работы составляет 155 страниц.

ZHAMKOCHYAN NELLI GEVORG

STATE-CHURCH RELATIONS IN CILICIAN ARMENIA IN THE PERIOD OF 1166 TO 1226

Summary

The research subject of this dissertation is to analyse the historical dynamics of the relationship between the Armenian State of Cilicia and the Armenian Apostolic Church in the period of 1166 to 1226. **The purpose of the study** is to comprehensively examine these interactions, taking into account their political, social and religious context based on the study of medieval sources and modern scientific literature, ensuring the most accurate reconstruction of historical processes.

Structurally, the dissertation includes an **introduction, four chapters divided into separate paragraphs, conclusions, a list of sources** and a **bibliography**.

The "introduction" substantiates the relevance of the research, formulates its subject, goals and objectives, establishes chronological boundaries, determines the scientific novelty and methodological basis of the work. In addition, the applied significance of the study is considered, the analysis of the primary sources and scientific literature used is carried out, and the general structure and content of the dissertation is outlined.

The first chapter of the dissertation, **"Catholicosate of Hromkla and the Armenian State of Cilicia in the Period 1166-1187",** is devoted to the study of the political-ecclesiastical relations between the Catholicosate of Hromkla and the Armenian State of Cilicia in the period 1166-1187. Particular attention is paid to the circumstances of Nerses Shnorhali's accession to the patriarchal throne, the analysis of his reign and the interaction of the Armenian Apostolic Church with the Byzantine Empire in the religious and political context. Key events are considered, including the murder of Prince Ruben II in Hromkla, as well as the role of Prince Mlekh in the struggle for the Catholicosate of All Armenians and his attempts to influence the process of electing a new Catholicos. The final part of the chapter analyzes certain aspects of Armenian-Assyrian Church relations, the Church policy of Prince Ruben III, the activities of the Church council in Hromkla, as well as the status of the Armenian Christian churches in Egypt.

The second chapter of the study, **"The Relations of State and Church During the Rule of Levon II (1187-1198)",** is dedicated to the analysis of State-Church relations during the reign of Levon II Metsagorts (Levon the Great). Here we present in particular the relationship between Catholicos Grigor IV Tgha (Grigor the Son) and Levon Metsagorts, as well as the details of the secret negotiations with representatives of the Christian West, the process of electing Grigor V Karavezh to the Catholicosate throne and then the circumstances of the political context of his murder. In the same chapter, particular attention is paid to the role of the Armenian clergy in the processes of State governance, and their participation in the proclamation of the Armenian Kingdom of Cilicia and the coronation of Levon Metsagorts. The diplomatic activities of the Armenian clergy aimed at establishing contacts with representatives of the Byzantine Empire and the Papal See are analyzed. The final part of the chapter examines the royal meeting in the city of Tarsus, the participation of the Armenian clergy in it, as well as the nature of the relationship between

Levon II the Great and Nerses Lambronatsi, which ended in tragic consequences for the latter.

The third chapter named **"The Relations of State and Church During the Kingdom of Levon Metsagorts (1198-1219)",** analyzes the State-Church relations in the Armenian Kingdom of Cilicia in the period 1198-1219. First, we present the cooperation of the State and the Armenian Apostolic Church on key issues that arose after the proclamation of the kingdom, as well as their opposition to the Latin Patriarchate of Antioch. Then the relations of the Armenian Apostolic Church and the Cilician State with the Catholic and Chalcedonian Churches are enlightened, as well as their influence on domestic political processes. This chapter also analyze the circumstances of the death of Catholicos Grigor Apirat, the end of the Catholicosate family from the Pahlavunies, the election of a new Catholicos and the proclamation of Hovhannes Ssetsi as a Catholicos, as well as the bifurcation actions of Bishop Anania. The final part of the chapter examines the conflict between Levon II the Great and Catholicos Hovhannes Ssetsi, their breakup, the temporary rule of the Catholicosate by David Arqakaghnetsi and the subsequent reconciliation of Levon and Hovhannes Ssetsi.

This research is to enlighten the State-Church relations in the Armenian Kingdom of Cilicia from 1219 to 1226 in **the fourth chapter "The Struggle for the Armenian Throne of Cilicia and the Armenian Church (1219-1226)"**. The internal political situation after the death of Levon II Metsagorts, as well as the details of the cooperation of the Armenian Church with state institutions during this period are also considered. Here the new Catholicosate elections are touched upon, in particular the details of the enthronement of Constantine Bardzrberdtsi. The participation of the Armenian Catholicos and the highest clergy in the political governance of the State is analyzed, including their role in organizing the marriage of Queen Zabel, the imprisonment of King Philip and the establishment of the Hethumian Dynasty.

The **"Conclusions"** section summarizes the main results and conclusions of the dissertation.

The total volume of the work is 155 pages.